

ՀԱՆՏԱԳՈՐԾ ԱՆՁ. ԴԵՊՔԻ ԿԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալ պրոբլեմը իր վրա է սևեռել շատ անվանի հոգեբանների ուշադրությունը: Հանցագործ անձի ուսումնասիրությունն առաջին հերթին անհրաժեշտ է հանցավորության դեմ արդյունավետ պայքարի համար:

Ինչես ասում են. «Հանցագործ չեն ծնվում, հանցագործ դառնում են»: Հանցագործությունը մի ակնթարթում, պահի ազդեցության տակ ձևավորված վարքագիծ չէ, այն երկարատև անձնային դեգրադացիայի հետևանք է:

«Հանցագործությունը անձի կամային, գիտակցված, հասարակայնորեն վտանգավոր, անօրինական, հակահրավական և քրեորեն հետապնդելի գործողություն է»:<sup>1</sup>

Վ. Ն. Կուրյավցևը գրում է. «Կոնկրետ իրավախախտման կառուցվածքը կարելի է վերլուծել տարբեր տեսանկյուններից: Իրավաբանական մոտեցումը այն բնութագրում է որպես գործողություն, որը բաղկացած է չորս տարրերից՝ օբյեկտ, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերից, սուբյեկտից: Քրեաբանության, սոցիոլոգիայի և հոգեբանության համար ավելի արդյունավետ է դինամիկ գեներտիկ մոտեցումը, որը թույլ է տալիս ուսումնասիրել մարդու վարքագծի զարգացումը: Այս տեսանկյունից կոնկրետ իրավախախտումը դիտվում է որպես պրոցես, որն իրականացվում է տարածության և ժամանակի մեջ»:<sup>2</sup>

Ըստ Չուֆարովսկու, հանցավոր վարքի ուսումնասիրության համար հատկապես կարևոր է սոցիալական միջավայրի և անձնավորության փոխազդեցության գործոնը, քանի որ անձնային որակները և սոցիալական միջավայրը առանձին - առանձին վերցված չեն կարող հանցագործության պատճառ հանդիսանալ: Սոցիալական միջավայրի ազդեցությունը անձնավորության վրա բարդ բնույթ է կրում, այն դրսևորվում է հանցարարքում՝ բեկվելով անձնավորության անձնային պրիզմայի միջով:

«Քրեական հոգեբանության հարցերից մեկը ներքին անձնային պայմանների բացահայտումն է, որոնք փոխազդեցված առաջին հերթին մոտիվացիոն ոլորտի հետ արտաքին նպաստավոր պայմանների դեպքում տվյալ անձնավորության համար ստեղծում են հանցավոր իրադրություն»:<sup>3</sup>

<sup>1</sup> Տես՝ Ա. Ջ. Արզումանյան, Էլզա Գրին, «Իրավաբանական հոգեբանություն», Երևան 2004, էջ 201:

<sup>2</sup> Տես՝ Кудрявцев В. Н., Причины правонарушений, М. 1976, С.87.

<sup>3</sup> Տես՝ Чуфаровски Ю. В., Юридическая психология, Москва, /Право и закон/, 1997.

Ինչպես ցանկացած գործունեություն, այդ թվում նաև հանցագործությունը, ունի իր դրդապատճառները, դրա հիմքում ընկած են հակահասարակական սովորությունները, փորձը:

«Հանցավոր վարքի դրդապատճառը կարելի է սահմանել որպես սոցիալական միջավայրի և կենսափորձի ազդեցության տակ ձևավորված անձի այն մտադրությունը, ձգտումը, որը հանդես է գալիս որպես հանցավոր գործունեության անմիջական ներքին պատճառ և արտահայտում է անձնային վերաբերմունքը այն բանի նկատմամբ, որն ուղղված է հանցավոր գործունեությանը»:

Հակահասարակական սովորություններն ու փորձը դրանք սոցիալապես վտանգավոր ավտոմատացված գործողություններ են, որոնց դեպքում չի ընկալվում, հասկացվում դրանց վտանգավորությունը և հակահասարակական արժեքը: Իհարկե սրանք հզոր ուժ են, սակայն դա չի նշանակում, որ անձնավորությունը դրանց գերին է: Յուրաքանչյուր անձնավորություն վերահսկում է դրանք այս կամ այն չափով, որը նրանից կանային մեջ ջանքեր է պահանջում: Իհարկե տարբեր անձանց մոտ վերահսկողության մակարդակը տարբեր է: Ցածր վերահսկողության դեպքում հակահասարակական սովորություններ են կողմնորոշում, ուղորդում անձնավորության վարքը:

Ինչես գիտենք, հանցավոր վարքի սուբյեկտը հանցագործ անձն է:

«Հանցագործ անձի հասկացությունը սահմանվում է ինչպես իրավաբանական տեսանկյունից՝ հանցագործն, ըստ օրենքի, հանցագործության սուբյեկտն է, այնպես էլ նրա հոգեկան էությունը արտացոլող, նրա հասարակական վտանգավորության ներքին պատճառները պարունակող տեսանկյունից»:<sup>5</sup>

Այս տեսանկյունի մեթոդոլոգիական հիմքը կազմում է հետևյալ դրույթը. երբեք արտաքին իրավիճակը, պայմանը չի կարող հանդիսանալ հանցավոր արարքի անմիջական պատճառ, եթե այն չի վերածվել անձնավորության ձգտման: Այլ կերպ ասած՝ չի բեկվել անձնային պրիզայով:

Հանցագործ անձի ուսումնասիրման երկու մոտեցում ենք առանձնացնում՝ *սոցիալ – տիպոլոգիական, սոցիալ – դերային*:

Սոցիալ – տիպոլոգիական մոտեցման դեպքում առաջին հերթին ուսումնասիրվում է անձնավորության սոցիալական դիրքը, նրան համապատասխանող սոցիալական նորմերը, դրանց ընկալումն ու իրականացումը:

Սոցիալ – դերային մոտեցումը թույլ տալիս տեսնել գործառույթները և դիրքերը, որոնք հակասում են գործող օրենքին, և անձնավորությունը կարող է իրականացնել դրանք միայն օրինազանց ծանապարհով: Փորձը ցույց է տալիս,

<sup>5</sup> Տես՝ Ս. Ջ. Արզումանյան, էլլազ Գրին, «Իրավաբանական հոգեբանություն», Երևան 2004, էջ 165:

<sup>6</sup> Столяренко А. М., Прикладная юридическая психология.

որ տարբեր հանցագործությունների համար բնորոշ են մոտիվացիոն համակարգի տարբեր աղճատումներ: Հենց տվյալ հանցարարքի կատարումը կախված է ինչպես իրադրությունից՝ օբյեկտիվ, այնպես էլ անձնավորության դիրքորոշումներից, որոնցից մեկը, անցնելով գիտակցական ոլորտ, վեր է ածվում հանցավոր միտման Այդ դիրքորոշումները ձևավորվում են ընտանիքի որոշակի սոցիալական խմբի և այլնի ազդեցության հետևանքով:

Ըստ Ուզնաձեի դիրքորոշումը յուրատիպ հոգեվիճակ է, որն արտահայտվում է որոշակի գործունեություն կատարելու պատրաստականության մեջ, որն ուղղված է պահանջմունքի բավարարմանը:

«Հանցավոր գործունեության դիրքորոշումը, ինչպես ցանկացած բարդ համակարգ, ունի տարաբնույթ կառուցվածքային բաղադրատարրեր, որոնք ակտիվանում են՝ կապված դիրքորոշման ուժգնությունից և խորությունից, Դրանց կազմում են.

- ա) հուզական բնույթի հոգեվիճակը (Ս. Արզումանյանը այն անվանում է բացասական հուզական դիրքորոշում),
- բ) դատողական - արժեքային վերաբերմունքը,
- գ) անձի սոցիալական փորձը,
- դ) սոցիալական դիրքը,
- ե) ակտուալ կառավարումը».<sup>6</sup>

Հանցավոր դիրքորոշումները դասակարգվում են հետևյալ փուլերի.

1. բացասական հուզական դիրքորոշում
2. նեգատիվ դիրքորոշում
3. նախաքրեածին դիրքորոշում
4. քրեածին դիրքորոշում
5. հանցածին դիրքորոշում:

Ինչպես արդեն նշեցինք, հանցավոր դիրքորոշումները ձևավորվում են սոցիալական միջավայրի, մասնավորապես ընտանիքի ազդեցության հետևանքով: Հատկապես ընտանիքի ազգային մենթալիտետի, ապրելակերպի մեջ կենտրոնական տեղ է հատկացվում հատկապես ընտանիքին:

Անձնավորության ներդաշնակ զարգացման համար ուղղակի անհրաժեշտ է ընտանիք՝ լիարժեք, համերաշխ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ հույժ վտանգավոր հանցագործների 20%-ը մեծացել են առանց ընտանիքի, ծնողների, իսկ մոտ 70%-ը՝ անբարենպաստ ընտանիքներում:

Անբարենպաստ ընտանիքները դասակարգում ենք հետևյալ խմբերի.<sup>7</sup>

- պայմանականորեն բարենպաստ ընտանիքներ
- պաշտոնական «սառը» հարաբերություններով ընտանիքներ

<sup>6</sup> Տես՝ Ս. Ջ. Արզումանյան, Էլզա Գրին, «Իրավաբանական հոգեբանություն», Երևան 2004, էջ 172:

- կոնֆլիկտածին և քրեածին հարաբերություններով ընտանիքներ
- քրեածին հոգեբանական մթնոլորտով ու հարաբերություններով ընտանիքներ
- սոցիալապես ոչ լիարժեք ընտանիքներ:

Հանցագործ անձի կաևորագույն քնորոշիչ հատկանիշներից մեկն էլ հանցավոր արարքի կատարման հոգեբանական ընդունումն է՝ որպես նպատակին հասնելու միջոց (հոգեբանական ընկալունակությունը): Չէ որ ամեն անձնավորություն չէ, որ նպատակին հասնելու համար հանցագործություն է կատարում: Օրինակ՝ ցանկալի իրը, հագուստը, մեքենան կամ բջջային հեռախոսը ունենալու համար մի անձնավորությունը որոշում է, պատրաստ է քրտնաջան աշխատել, իսկ մյուսը նախընտրում է այն ուղղակի գողաճալ:

Հանցավոր վարքի հոգեբանական ընկալունակությունն անհատական է, տարբեր է յուրաքանչյուր անձի համար և միաժամանակ հարաբերական է միևնույն անձնավորության համար: Դա դրսևորվում է հետևյալում.

- անձնավորությունը կարող է ընդունել կամ ընդունում է վիայն որոշակի, կոնկրետ տեսակի հանցավոր արարքի, հանցագործության կատարումը և բացառում է մյուսները, որոնք, սակայն, թույլ են տալիս հասնել միևնույն նպատակին:

- Կոնկրետ հանցագործության կատարումը ընդունելի է կամ ոչ՝ կապված հանցագործության օբյեկտների հետ: Այս դեպքում օրինակ՝ հանցագործը կարող է կատարել հանցագործություն միայն մարդկաց կոնկրետ դասի նկատմամբ, օրինակ՝ ոստիկանների, իրավապահ օրգանների աշխատակիցների կամ էլ հարուստների նկատմամբ, բայց ոչ երբեք այլոց նկատմամբ:

- Հանցագործության որոշակի տեսակի նկատմամբ ընկալունակությունը՝ կախված հասցվելիք վնասի չափից, որը հանցագործն ընդունելի է համարում:

- Ընկալունակությունը պայմանավորված է որոշակի պահանջմունքներով, որի բավարարման համար սուբյեկտիվորեն ընդունելի կամ անհրաժեշտ է տվյալ հանցագործության կատարումը:

- Ընկալունակությունը փոխկապակցված է նաև արտաքին պայմանների հետ, որոնց հեպքում հանցագործության կատարումը հնարավոր է դառնում, ինչպես նաև հոգեվիճակի հետ, որը հանդես է գալիս որպես հանցագործության կատարման ներքին պայման:

Եթե հանցագործ անձի հոգեբանական կառուցվածքը դիտարկենք հանցագործության կատարման համար նրա իրականացրած գործառույթների տեսակներից, ապա այն պետք է ներառի որակներ, որոնք պայմանավորված են.

- այս կամ այն սոցիալական պայմանների քրեակյանորեն նշանակալի ըմբռնումը,
- հանցագործության մոտիվը,

- հանցավոր նպատակի ընդունումը, որը, որպես եղպիսին, որոշվում է մոտիվների քրեական ճանապարհով իրականացմամբ.
- հանցավոր նպատակի իրականացման հնարավորությունը:

*Ստորև ներկայացնում ենք կոնկրետ դեպքի ուսումնասիրությունը.*

Ս. Շ.-ն, լինելով նույն գործարանի աշխատակից, ինչ տուժողի մայրը, չահադիտական նպատակներով ներխուժել է վերջինիս բնակարան՝ կողոպուտի նպատակով: Պեպերի հետագա զարգացման հետևանքով Ս. Շ.-ն սպանել է գործընկերուհու տասնմեկամյա որդուն:

Ս. Շ. – ն մոտ 50 տարեկան, ֆիզիկապես առողջ, բարձրահասակ, բարեկամ կին է: Ունեցել է մշտական աշխատանք, մշտական բնակության վայր. ցածր մակարդակի նութական ապահովվածության ընտանիք:

Մտածողությունը, հիշողությունը և ուշադրությունը գտնվում են զարգացման ցածր մակարդակի վրա:

Առկա է ագրեսիվության միջին մակարդակ: Ս. Շ. – մոտ առկա է տագնապայնության, ինչպես նաև ֆրուստրացիայի բարձր մակարդակ, որը, մեր կարծիքով կապված է նրա կյանքի պայմանների հետ. երիտասարդ հասակում Ս. Շ. –ն հանդիպել է մի երիտասարդի հետ, որը ինչ-ինչ պատճառներով չի ամուսնացել նրա հետ՝ լքելով նրան: Ս. Շ. –ն զբավել է եղբայրների և բժույրերի դաստիարակությամբ, որոնք նրանից բավականին երիտասարդ են տարիքով: Չնայած նա հետագայում ամուսնացել է, սակայն բավականին մեծ տարիքում, որի պատճառով երեխաներ չի ունեցել՝ իրեն եամարելով կործանված անձնավորություն:

Նա մեղսունակ է, կարող է ղեկավարել սեփական գործողությունները, հասականում է սեփական գործողությունների հետևանքը և զղջում կատարածի համար:

Վերջում տանք տվյալ հանցագործի և նրա հանցարարքի մասին համառոտ տեղեկություններ.

**Սոցիալ- դեմոգրաֆիական տվյալներ**

<i>սեռը</i>	-	իգական
<i>տարիքը</i>	-	50-55 տարեկան
<i>գործունեության բնույթը</i>	-	գործարանում հաշվետար
<i>ընտանեկան դրությունը</i>	-	այրի:
<i>տնտեսական դրությունը</i>	-	տնտեսապես անապահով
<i>արտաքինը</i>	-	սովորական
<i>Ֆիզիկական առողջությունը</i>	-	առողջ է, ֆիզիկապես բավականին ուժեղ
<i>Հոգեբանական և սոցիալ – հոգեբանական տվյալներ</i>		
<i>խառնվածքը</i>	-	Ֆլեգմատիկ (ըստ Բելովի խառնվածքի բացահայտման հարցարանի):
<i>բնավորության</i>	-	պեղանտ, գրգռվող («Անձնավորության

շեշտվածություն շեշտվածության հարցարան» ըստ Լեոնիարդի)

Ըստ Լիրիի միջանձնային հարաբերությունների ակտորոշման մեթոդիկայի հետազոտվողը «բարյացակամ» տիպին է պատկանում: (Բարյացակամ է և սիրալիր բոլորի հետ, ձգտում է բավարարել բոլորի պահանջները, «լինել լավը» բոլորի համար՝ առանց իրադրությունը հաշվի առնելու, ձգտում է միկրոխմբի նպատակներին, ունի արտամղման և ճնշման պաշտպանական զարգացած մեխանիզմներ, հուզական է և լաբիլ):

Ըստ Ռոկիչի «Արժեքային կողմնորոշումներ» մեթոդիկայի գրանցվել են հետևյալ տվյալները.

տեղմիննա առժեքներով (համոզմունքը, որ անհատական գոյության վերջնական նպատակը արժանի է, որպեսզի ձգտեն դրան)՝ առաջին տեղում են երջանիկ ընտանեկան կյանքը և նյութական բարեկեցությունը:

Ինստրուկցիոնալ առժեքներով (համոզմունքը, որ անձնավորության գործունեության որևէ տիպը կամ որակը նախընտրելի է ցանկացած իրավիճակում) առաջին տեղում կարգ ու կանոնը և դաստիարակվածությունը:

Ըստ Թոմասի «Անձի կոնֆլիկտային վարքի նախատրամադրվածության ակտորոշման մեթոդիկայի» հետազոտվողը կոնֆլիկտային իրավիճակում այժմ հակված է փոխզիջման.

Չետազոտվողը կարողանում է վերահսկել սեփական գործողությունները: Հասկանում է սեփական գործունեության նշանակությունը և հետևանքները:

Չոգեբանական առանձնահատկությունները - սեփական կյանքիվ ներտիկ անբավարարվածություն, չափազանց տազնապայնություն:

Իրավաբանական

Չանցանքը - սպանություն շահադիտական նպատակներով

պատիժը, դատավժիղը - 15 տարի ազատազրկում

հանցանքի մոտիվը - շահադիտական, (կատարել գողություն)

Կրկնահանցագործություն (հանցանքի կրկնություն) առկա է:

## **Օգտագործված գրականությունը**

1. Արզումանյան Ս. Չ., է. Ա. Գրին, «Իրավաբանական իրադրություններ», Երևան 2004:
2. Арумянян С. Дж., Психолого-криминологическая теория становления личности правонарушителя, Ереван 2000.
3. Васильев В. А., Юридическая психология.
4. Епишев М. Н., Структура и система категории юридической психологии, Москва 1996.
5. Столяренко А. М., Прикладная юридическая психология.
6. Кудрявцев В. Н., Причины правонарушений, М. 1976.
7. Чугаровски Ю. В., Юридическая психология, Москва / Право и закон/1997.